*թարկւում են օրէնքով բոլոր դրամական հաշիւների քննութիւնները, և ուր զատուել են անխտիր թէ քահանաներ և թէ նոցանից բարձր հոգևոր պաշտօնեաներ։*

**Գիւտ ար. Աղանեան**

---

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*Մոսկուա. Ա. Շ.—Սուքիաս արքեպիսկոպոսի ծախքով հրատարակուած «Ագաթանգեղոս» գրքի մասին Ձեր ուզած տեղեկութիւնները չենք կարող հաղորդել, որովհետև այդ գիրքը մենք աչքով էլ չենք տեսել և գաղափար չունենք նրա մասին։ Դիմեցէք Ս. Մալխասեանցին։*

*Բագու.—Ա. Ց. Թերթիս խմբագրի յայտարարած գրքոյկը մի փոքր կուշանայ, որովհետև ընդարձակ ծաւալ ստացաւ։*

*Կարս.—Դ. Ձեր յօդուածի տպագրութիւնը յետաձգուեց, որովհետև յօդուածի մի մասը ուղարկել էիք մատիտով գրած և գրեթէ անընթեռնելի, իսկ տպարանի համար պէտք է պարզ գրել, անպատճառ թանաքով և ցանկալի է՝ մի երեսի վրայ։ Ցառաջաբանը Ձեզ յետ ուղարկեցինք, որ պարզագրէք։*

*Բագու. մեր գործակալին. «Բագուի» բոլոր նոր բաժանորդներին ուղարկեցինք «Լումայ»-ի այս տարուայ բոլոր համարները։*

*Խմբագիր Հրատարակիչ՝* ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ